ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«02» Նոյեմբերի 2012թ. N 465-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի հունիսի 5-ի N 728 հրամանագրի 1.6 կետի պահանջներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի N 844-Ն որոշման 3-րդ կետի պահանջները, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնների պահպանմանը նպաստելու նպատակով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմում ձևավորել էթիկայի հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ ձեռնարկել գործնական միջոցներ աշխատակազմում քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնների պահպանման ուղղությամբ:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի հուլիսի 11-ի N 283-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
„02" 11 2012թ.
N 465-Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Փ.Կարապետյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար

Հանձնաժողովի քարտուղար՝

Դ.Դավթյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ

Անդամներ՝

Յու. Մանվելյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Ս.Խաչատրյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ

Հ.Վարդանյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*